ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի հունիսի 4-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի
Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11«Ա» դասարանի
ծնողական ժողովը:
Ժողովին ներկա էին բոլոր ծնողներն ու աշակերտները:
Ժողովը վարում էր դասղեկ Նարե Հովհաննիսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. 2017-2018 ուստարվա արդյունքների ամփոփում
ա) ուսման առաջադիմությունը 2-րդ կիսամյակում
բ) տարեկան գնահատականների ամփոփում
գ) հաճախումների արդյունքները ուսումնական տարվա ընթացքում:

2. Ընթացիկ հարցեր (ամառային արձակուրդի ճիշտ կազմակերպում,էքսկուրսիայի կազմակերպում)

1. Լսեցին.- 2017-2018 ուստարվա արդյունքների ամփոփում հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Նարե Հովհաննիսյանը:
Նա ամփոփ ներկայացրեց դասարանի աշակերտների 2-րդ կիսամյակի արդյունքները և նշեց, որ այս կիսամյակում աշակերտներից շատերը թերացել են և չկարողացան ապահովել բարձր գնահատականներ: Դասարանում չկան գերազանցիկներ, հարվածային է մեկ աշակերտուհի՝ Մանիկ Պողոսյանը:
Նշվեց նաև,որ բացակայությունների թիվը ուսումնական տարվա ընթացքում կազմել է 952 ժամ, որի հիմնական մասը կազմում է Բորիկ Ավետիսյանի և Անդրանիկ Գրիգորյանի բացակայությունները, որի պատճառով նրանք չեն փոխադրվում 12-րդ դասարան:

Կատարվել է դասագրքերի ընդունում և հանձնում՝ առանց թերությունների:

Որոշեցին.

Ի գիտություն ընդունել դասղեկի հաղորդումը առաջադիմության վերաբերյալ և նպատակաուղղված և ճիշտ կազմակերպել ամառային հանգիստը, որպեսզի ավարտական դասարանում բարձր արդյունքներ գրանցվեն:

2. Լսեցին.- Ընթացիկ հարցեր (ամառային արձակուրդի ճիշտ կազմակերպում,էքսկուրսիայի կազմակերպում)

Բուռն քննարկում տեղի ունեցավ, որին մասնակցում էին թե՛ ծնողները և թե՛ աշակերտները: Բոլորի նպատակն էր ճիշտ ու ռացիոնալ օգտագործել ամառային արձակուրդները: Տղաների ծնողներից գրեթե բոլորը նշեցին, որ իրենց երեխաները արդեն աշխատանքի պայմանավորվածություն ունեն,որը խրախուսանքի արժանացավ բոլորի կողմից: Որպեսզի ամառային հանգիստը լիարժեք լինի, առաջարկվեց(բոլորի կողմից) գնալ էքսկուրսիա Իջևան, որի կազմակերպումը հանձնարարվեց ծնողկոմիտեի նախագահ Կարինե Շահնազարյանին և անդամներին:

Որոշեցին.

Հանձնարարել ծնողկոմիտեի նախագահին և անդամներին ամենայն պատասխանատվությամբ կազմակերպել էքսկուրսիան՝ միշտ կապի մեջ պահելով դասղեկին և բոլոր ծնողներին, հավաքել անհրաժեշտ գումար տրանսպորտի և սննդի հարցը կարգավորելու համար:

Ժողովի նախագահ՝ ---------- (Կ. Շահնազարյան)
Քարտուղար՝ ---------- (Լ. Փանոսյան)